Բաղուի բնակչաց կենցաղավարութեան, ապրուստի, կառավարութեան, սովորութեան և ամենայն հանդամանաց համար դժուար է գրել և խօսել. ըստ որում հազար ու մէկ աշխարհքից, գիւղերից, քաղաքից, գաւառից և նահանգից ժողոված՝ իւրաքանչիւրը համարեա թէ մի մի սովորութիւն ունի իրեն երկրի և տեղի կառավարութեան համաձայն։

Բաղուի մէջ կան երկու հայոց եկեղեցիք և երկու ռուսաց եկեղեցիք։ Հայոց մի եկեղեցին յանուն սուրբ Աստուածածնի գտնվում է հին թաղումը և բերդի մէջ, փոքրիկ դրութեամբ և մի նեղ պարսպի մէջ, ծովեղերքի մօտ, որը նորոգուած է 1789 թուին ըստ աւանդութեան հին մատուռի տեղումը[1]. և վերջին նորոգողն է Նախիջեւանցի վաճառական Մարկոս աղան Թառումեանց և եղբարքն՝ Զօհրապ, Յովհաննէս և Կարապետ՝ ըստ պատմութեան Ծերունի պ. Յովսէփայ Թումայեանց և բաղուեցւոց։

Զինութեան կամ նորոգութեան արձանագիր չունի, միայն

---

[1]) Հին մատուռը ըստ աւանդութեան չինուած է եղել այն բաղնեաց տեղումը, որ կանգնած էին մինը իբրեւ կրակի չաստուած և միւսը ծովի չաստուած, զոր կործանեց Եղիշէ առաքեալը Աղուանից աշխարհը գալու միջոցին, և տեղը Քրիստոսի խաչի նշանը կանգնեց, ուր ապա Մեսրովբ Թարգմանիչը չինել տուեց մատուռ յանուն Տիրամօրն։

Իսկ Վ. աչագան բարեպաշտ Թագաւորն Աղուանից յամի Տեառն 500 չինեց եկեղեցի, ըստ այսմ և Բաղուայ հին և նշանաւոր եկեղեցին և ուխտատեղին է սուրբ Աստուածածնայ եկեղեցին, որ բերդի մէջ և փարոսեան աշտարակի դիմացն է։

Ծովային չաստուծոյ պատկերը 1893 թուին գտնուեց Շամախւոյ վիճակի Նոր—Շէն գիւղի սահմանումն, որը և գտնուում է նոյն գիւղացի բաղարնակ պարոն Գէորգ Միրզաբէկեանցի մօտ, որ է ծխախոտի յայտնի գործարանատէր, ուր և ես սոյն 1894 թուին տեսի և է այս օրինակ — երեք ֆնտանոց մի արծաթեայ խոր պնակի (տապերքի) մէջ նկարուած է ծով խիստ ալիքներով զարդարուած։ Ալիքների վրայով խաղում են ձկները և անցնում է ծովի դիցուհին (մի հեռարձակ աղջիկ) նստած ամեհի ձիաձկան վրայ (գբլուխը մինչեւ մէջքը ձիու, իսկ ազին—պոչը ձկան). մի աղջիկ ձիու սանձնէ բռնած մի աղջիկ ձեռքը դրել է ձիու գլուխի, (սաղրու) վրայ մի աղջիկ եղերքին փող է փչում, և մի աղջիկ պսակ է բռնել։